լու նաև զալիքի օրինաչափությունները, վերջին պարագայում համագործակցած ազգահասարակութաբանության /էթնոսոցիոլոգիայի/ հետ: Այդուհանդերձ, ժողովրդագիտության ավանդույթային շրջանակները հիմնականում որոշվում են մերձավոր անցյալի որոշակի ժամանակաշրջանով /XIX դ. - XX դ. սկզբներ/:

5. Այսպիսով, փորձ արվեց որոշ չափով համակարգելու, ճիշտ է, մասնագետներին լռելյան հայտնի, բայց մինչև այժմ նման հայեցակետով չքննված գիտության հարակից բնագավառների՝ ազգաբանության, բանագիտության ու հնագիտության նյութահայթհայթման և հետազոտության մեթոդների փոխառնչակվածությունը՝ յուրահատկություններով հանդերձ:

ՖԵԼԻՔՍ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՈՎ

ԱՐՋԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Չնայած որ ազգագրագետները և հնագետները /Է. Պետրոսյան, Ժ.Խաչատրյան, Ս. Եսայան/ ենթադրել են արջի պաշտամունքի առկայությունը հին Հայաստանում, այդ պաշտամունքի բնույթը տակավին հետազոտված չէ:

2. Հատկապես ուշագրավ են հին Հայաստանին վերաբերող արջակերպ խեցեղեն գտածոները: Թվում է, թե դրանք /ուրիշ կենդանիներ պատկերող անոթների հետ միասին/, ինչպես նաև դրանց վաղ նախատիպերը հանդիսացող հեթիթական անոթները աստվածությունների կենդանակերպ նմանակման /իպոստաս/ ծիսապաշտամունքային պատկերումն են և օգտագործվել են այդ աստվածություններին առնչվող արարողություններում: Դրանցով հեղուկ ըմպելը խորհրդանշել է աստվածային ուժի ստացում, մերձեցում տվյալ աստվածությանը /Ֆոռեր/:

3. Հայ բանահյուսական նյութի /ավանդություններ, հանելուկներ, հեքիաթներ և այլն/ քննությամբ բացահայտվում է արջի կերպարը՝ որպես մեռնող և հառնող բնության դերում հանդես եկող նմանակի աստվածություն: Արջը հանդես է գալիս որպես բարեհաջողություն, առողջություն պարգևող աստվածություն, բայց նա նաև սով ու մահ տվող է: Ահա թե ինչու արջակերպ խեցեղեն անոթների մոտներին ժպտավուն արտահայտություն տալն ունեցել է աստվածության բարեհաճությունն ապահովող մոգական իմաստ: Արջը, որպես բարեհաջողության կրող, հանդիսացել է հին հասարակությունների, ապա նաև ընտանիքի ու ծննդկանի հովանավոր: Համարվել է նաև հովանավորը երկրագործության և անասնապահության /վերջինս հավաստվում է նաև արջառ - արջառ բառի

ընութ յամբ/:

4. Արջի պաշտամունքի կենցաղավարման երկարատև ժամանակաշրջանը /մ.թ.ա. II հազ. մինչև քրիստոնեության ընդունումը/ թույլ է տալիս ենթադրելու, որ որպես աստվածություն արջը կարող էր ունենալ նաև մարդեղային նմանակում: Դա է վկայում հայ քրիստոնեական ավանդությունում արջի աղերսը ս. Գևորգի, ս. Կարապետի, ս. Կիրակոսի և ս.Սարգսի հետ: Ըստ այդմ, արջը հանդես է գալիս այդ սրբերի նկեղեցի շինողի կամ դրանց տաճարների սպասավորներին վրդովելի դերում:

5. Արջի մարդեղային նմանակումը բացահայտելում կարևոր նշանակություն ունի Եկեսոսի Արտեմիդի պաշտամունքի համադրումը հեթիթների օրոր այդտեղ պաշտված Տելեպինի աստծու հետ: Նրա բուսապելի բնությունը և դրա համադրումը հայ ազգագրության տվյալների հետ թույլ է տալիս ենթադրելու, որ Տելեպինիի կենդանակերպ նմանակը ևս արջն է եղել, որը նպաստել է անտիկ շրջանում այդտեղ էլ արջի կենդանակերպ նմանակ ունեցող Արտեմիդի պաշտամունքի հիմնմանը: Ստուգաբանական աղերսը Տելեպինի անվան և меѣенамсѧ բառի միջև թույլ է տվել ենթադրելու Տելեպինիի մեկնաբանումը նաև որպես մեղվի աստված /Վ. Ն. Տոպորով/: Սլավոնական դիցաբանությունում մեղվի աստվածը Ցարիլոն է՝ ս. Գևորգի նախատիպը /Վ. Ն. Տոպորով/:

6. Գր. Ղափանցյանի հավաստած աղերսը Ցարիլոյի և հայկական Արայի միջև և այն պարագան, որ հայ ավանդություններում արջն ուղղակիորեն առնչվում է ս. Գևորգի հետ, թույլ է տալիս ենթադրելու, որ հին Հայաստանում արջը հանդես է եկել որպես Արա աստծո կենդանակերպ նմանակ:

7. Մովսես Խորենացու ,,Հայոց պատմության,, Արա Գեղեցիկին վերաբերող տվյալների քննությունը թույլ է տալիս պնդելու, որ դա հաղորդում է ոչ միայն Արայի՝ որպես մեռնող և հառնող աստծու ընության մասին /Գր. Ղափանցյան/, այլև աստվածային ուժերի /սեռական ունակության/ սպանման և հառնման դիցաբանական ծեսի նկարագրություն, ուր Արա աստվածության դերում հանդես են եկել ծիսական արքա-կախարդները: Դրան համապատասխանում են հայ ազգագրության տվյալները՝ ըստ արջի կողմից կնոջ առևանգմամբ ծիսային ամուսնությունների և դրանցից ծնված որդիների կողմից արջի սպանության նկարագրությունների:

8. Խուրիտական _ազ_-ի, հեթիթական _ազգ_-ի և հայկական _Արա_-ի համադրումը թույլ է տալիս ենթադրելու Արա անվան ստուգաբանումը որ-

պես պարզև և այն ընդլայնելու ,,բարեկամ,, հասկացությամբ, որը մինչև այժմ էլ կա հայերենում, բայց ստացել է խոսակցական-ընտանեվարի երանգ:

ՆԱՐԴ ՔՈՉԱՐ

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵՋ՝ ԸՍՏ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1. Ինչպես պարզվեց ծեռնա-մաշկային ռելիեֆի ուսումնասիրություններից, հայերը բնութագրվում են այն գծերի առավելագույն արտահայտվածությամբ, որոնք բնորոշ են հարավային եվրոպեոիդներին, առանց որևէ այլ ռասայական խառնուրդների: Այդ նշանների համալիրը բարձրագույն արտահայտչականության է հասնում կովկասիոն և առաջավորասիական լոկալ ռասաներում:

2. Հիշյալ տվյալներից ելնելով, ուշագրավ է թվում հայերի բաղդատումն Առաջավոր Ասիայի և Կովկասի մի շարք ժողովուրդների հետ մի հատուկ մեթոդով, որը կոչվում է ,,ընդհանրացված գենետիկական տարածությունների,, մեթոդ, որն այդ արեալի ժողովուրդների դիֆերենցիացիայի չափանիշն է:

3. Ինչպես պարզվեց հաշվարկումներից, այդ մեթոդով թվարկած բոլոր ժողովուրդները բավականին մոտ են միմյանց: Հայերին առավել մերձ են օսերն ու հարավային վրացիների խմբերը և Հյուսիսային Կովկասի մի շարք ժողովուրդներ: Իսկ ամենահեռու ընկածները միթվալիներն ու սվանները են: Այդ մեթոդով ժողովուրդների մերձավորությունները համադրելու համար հաշվել ենք նաև գենետիկ տարածությունը հայերի և յակուտների միջև, որը գրեթե հասել է մեկ միավորի և ցույց է տալիս ծայրահեղ հեռավորություն:

4. Առաջավոր Ասիայի և Կովկասի ժողովուրդների ծեռնափերի մաշկաքանդակային ակնհայտ նմանությունը հավաստում է տվյալ բնատարածքների հին եվրոպեոիդ բնակչության ընդհանուր ծագումը: Նշանների այդ համալիրը կարող էր պահպանվել ռասայական մեկուսացման պայմաններում՝ սկսած նեոլիթի և բրոնզի դարերից, երբ նեղերես ու երկարագլուխ բնակչությունը քանակապես ծնշող մեծամասնություն էր կազմում:

ՌՈՒԲԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

,,ԷԹՆԻԿ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ,, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արևմուտքի սոցիալական գիտությունների բառապաշարում լայնորեն օգտագործվող ,,էթնիկ նախապաշարմունք,, տերմինը դասվում է էթնիկ հարա-